

ևս թարգմանիչ, որ է պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին» (Էջմ., Թ. 2271, Թղ. 218ա, յամէ 1724. նոյնը հրատ. Ազգարար, Մազրաս, 1795, էջ 188 = Գալէմքեարեան, Պատմ. հայ լրագրութեան, էջ 206) : Սորով պատմիչն կը յիշէ նաեւ Կիրակոս Գանձակեցի, էջ 3, 16 : Սորովի՞ գործն է այն, որ կը յիշուի Սովերք Հայկականք, Բ., 37 իբր «Կատարեալ պատմութիւն Սահակայ եւ Մեսրոպայ» (հմտ. առ այս Նորայր Բիւզանդացի, Կորին վարդապետ, էջ 10, ծան.) : Ինձ կը թուի թէ Սորով թարգմանիչն նոյն է Սորով վարդապետի կամ «քահանայի» հետ, որ եւ կոչուած է Սորովիկ թարգմանիչ, եւ ծագած Բ. դարու առաջին քառորդին, եւ իրեն վերագրուած «Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին» ոչ այլ ինչ է, բայց եթէ Ղ. Փարպեցոյ վերագրուած Ա. Դրուագը : Այս մասին սխալ խօսիմ ընդարձակ այլուր :

Հ. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԸՆ ՄՈՒՏՎԵՐ ՎՐԱՍՏՆՈՒՄ

Մծխէթի հրէական գաղութը : Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Սրբուհի Նունէ (Նինօ) Վրաստանի առաքելուհին : Չաղէցի Յովհաննէս Եպիսկոպոսի եւ իր ընկերների գործունէութիւնը Վրաստանում, Չ. դարում : Քրիստոսի Անկար պատմաբանի աւանդութիւնը Վրաստանում, Բիւզանդիայում եւ Գաղղիայում :

Ինչպէս բոլոր արեւելեան եկեղեցիները, Վրաց Եկեղեցին եւս իր հիմնարկումը վերագրում է Քրիստոսի առաքելներից մէկին : Վրաց Տարեգրքն այս մասին նոյն խոսքն աւելի յառաջ է գնում : Նրա պատմածին նայելով, Քրիստոսի համբարձումից յետոյ երբ առաքելները վիճակ են գցում որոշելու համար թէ ո՞վ ո՞ւր պիտի գնայ քարոզելու, Վրաստանը լուսաւորելու վիճակն ընկնում է նոյն ինքն Մարիամ Աստուածածինն : Սակայն Աստուածամայրը հրաժարում է այս ճանապարհորդութիւնից եւ իր կողմից նոյն պաշտօնը յանձնում է Անդրէաս առաքելին :

Չուզելով այնու ամենայնիւ բոլորովին զրկել Վրաստանը՝ Աստուածածինն որոշել է իր սրտակերն ուղարկել... : Այս է պատճառն, առում է աւանդութիւնը, որ այնչափ շատ տաճարներ են կանգնուած Վրաստանում Աստուածամօր անուան : Իսկ Անդրէաս առաքելին իրօք եկե՞լ է Վրաստան թէ ոչ՝ աւանդութիւնն այդ մասին լուծում է կամ որոշ բան չէ ասում : Միայն թէ նրա անունը եւ նրա հետ միասին Սիմէոն կանանացու անունը հին դարերում յարգուած է եղել Վրաստանում : Յատկապէս Սիմ. կանանացուն նուիրուած վանքեր էլ են հիմնուել :

Վրաց Տարեգրքում քրիստոնէութեան մուտքի եւ տարածման պատմութիւնը քաղուած է «Վրաստանի Դարձը» (վրացերէն «Քարթլիս Մոքցէվա») կոչուած վրացական գրչագրից, իսկ այս վերջինի աղբիւրներն են եղած՝ անկասկած Ագաթանգեղոսն եւ Մ. Սորենացու Հայոց Պատմութիւնը, ժամանակի եւ պարագաների համաձայն կատարուած փոփոխութիւններով, վրացական գրոյցներից առաջնորդուելով :

«Վրաստանի Դարձը» կոչուած պատմութեան երկու մասից է բաղկացած : Ա. մասը հրատարակուել է 1890ին, իսկ երկրորդ մասն, որ «Ս. Նինոյի կեանքը» վերնագրին է կրում, հրատարակեց ծանօթ վրացի գիտնականն Եփրեմ Թաղայշվիլի, ուսուցիչ թարգմանութեամբ միասին, կցելով բազմաթիւ հմտալից տեղեկութիւններ : Յետոյ կատարուեցան նաեւ անգլիերէն եւ գերմաներէն թարգմանութիւններ : Այս հետաքրքրական վրացերէն գրչագիրը գտնուած է Ծաղերգի (Տայքում) նախ հայկական եւ ապա վրացականի վերածուած նշանաւոր վանքի ձեռագիրներին ժողովածոյի մէջ : Վրացի հնագէտ Բաքրաձէ ենթադրում է թէ Սորենացին՝ Ս. Նինոյի կամ ըստ Հայոց Նունէի առաքելութեան վերաբերեալ իր պատմածը քաղած է այս գրչագրից :

«Ս. Նինոյի կեանքը», ինչպէս առհասարակ բոլոր այդ օրինակ հին «սրբոց վարքերը» պարունակում են մեծ թուով գրոյցներ, որոնք ընդհանրապէս կրօնական ջերմեռանդութեամբ ոգեւորուած գրողների երեւակայութեան ծնունդ են. բայց պատահում են այնտեղ նաեւ կեանքի իրական գծեր եւ պատմական զէպեր : Ահա ինչպէս է նկարագրուած Վրաստանում քրիստոնէութեան

մուտքը այդ՝ «Վրաստանի Դարձը» ընդհանուր անունը կրող գրչագրում :

Կապաղադովկեացի Չարդոն անունով մէկը, յանուն Քրիստոսի իր թշնամիներին յաղթելուց յետոյ, ուխտի է գնում Երուսաղէմ եւ այնտեղ ամուսնանում է Սուսան կամ Դուշան անունով մի աղջկան հետ : Այս ամուսնութիւնից ծնունդ է կլաստատա քաղաքում Նինօ, Վրաստանի ապագայ Լուսաւորիչը : Երբ Նինօ տասներկու տարեկան է դառնում, հայրը նրան Աստուծոյ է նուիրում, որպէս զի նա մշտական կոյս մնայ, իսկ ինքը աշխարհից քաշուելով ճգնաւոր է դառնում : Նինօ (կամ Նունէ ըստ Հայոց) մինակ մնալով գալիս է Հայաստան եւ Դուին քաղաքում մի հայի քով աղանդութիւն է անում եւ այնտեղ հայերէն է սովորում : Լսելով Հայաստանում իրեն նման ուրիշ օտար կոյսերի գոյութիւնը, նա գտնում է նրանց եւ ընկերանում է Ս. Հովիտիմէին : Երբ Տրդատի հրամանով Հովիտիմէին եւ միւս կոյսերին նահատակում են, Նունէ թաղնում է «վարդնու տակ», եւ այնտեղից մտիկ է տալիս թէ ինչպէս «նահատակեալ հոգիներն երկինք են համբառնում» : Երբ նա այս կերպով աղաւուծ է մահից, երկնային տեսիլքը նրան հրամայում է «գնալ ի կողմն հիւսիսի, ուր հունձք բազումք են եւ մշակ ոչ գոյ» : Եւ որպէս զի կոյսը չսխալի, տեսիլքը նրան գրաւոր պատուէր է թողնում «հոռմայեցերէն լեզուով» գրուած¹ : Նինօ հնազանդում է եւ այս գրաւոր հրահանգից առաջնորդուելով գնում է դէպի հիւսիս եւ գալիս է սահմանակից նահանգն, որ Մէսիէթին կամ Վիրահայքն էր : Այնտեղ նա պատահում է հովիտներ, որոնց հետ հայերէն է խօսում : Հովիտները ցոյց են տալիս թէ ի՞նչ ճանապարհով պէտք է գնայ, եւ նա շարունակելով գալիս է Մծխէթա, Վրաստանի մայրաքաղաքը : Մծխէթում նա ապաստանարան է գտնում թագաւորի պարտիզպանի կնոջ, Անաստասիայի քով : Ամբողջ 3 տարի նա մնում է այս հիւրընկալ կնոջ մօտ : Մծխէթում նա յարաբերութեան մէջ է մտնում տեղւոյն հրեայ գաղութի հետ եւ մտերմանում է նրա քահա-

նայ Արիաթարի ու կնոջը (կամ աղջկան) Սիդոնեայի հետ : Այս Արիաթարը՝ կարգացած լինելով Քրիստոսի դալստեան վերաբերեալ մարգարէութիւնները՝ դառնում է Վրաստանի առաջին հաւատացեալը² :

Նունէ՝ Արիաթարի ընկերութեամբ քաջալերուած, դուրս է գալիս իր թագստեան տեղից եւ սկսում է իր քարոզութիւնը : Նրա նորածեւ քարոզներն եւ կատարած հրաշքները տարածում են իր համբաւը : Այդ ժամանակ Վրաց թագուհին, որ ըստ Վրաց Տարեգրքի, Հայոց Տրդատ թագաւորի աղջիկն է եղել, բնաւ տեղեկութիւն չէ ունեցել թէ ի՞նչ մեծ փորձանք է անցել իր հօր գլխից եւ ի՞նչ մեծ կրօնական յեղափոխութիւն է կատարուել իր հայրենի երկրում : Լսելով Նունէի համբաւը, ինքն էլ արդէն տկար, կանչում է նրան եւ ուղում է նրանից լսել բոլոր մանրամասնութիւնները : Նունէ մի առ մի պատմում է Հայաստանում կատարուածն իբրեւ ականատես, որից թագուհին մեծապէս ազդու է եւ խնդրում է, որ իրան եւս բժշկէ : Նունէի սղօթքի շնորհիւ թագուհին եւս բժշկուած է : «Եւ տարեալ գնա (թագուհին), գրում է Չունչէր, ի մահիճան Նունեայ եւ նորա աղօթեալ յերկար՝ եզ զխաչն ի վերայ նորա չորեքուսի եւ նա (թագուհին) նոյնժամայն նստաւ ողջացեալ» : Այս բժշկութիւնից վերջը Տրդատի աղջիկը հաւատում է Քրիստոսին եւ այնուհետեւ ամէն կերպ պաշտպան է հանդիսանում Նունէին : Իսկ թագաւորի դարձն ըստ նոյն գրոյցին՝ տեղի է ունեցել հետեւեալ պարագաներում, որ մասամբ յիշեցնում է Հայոց արքայ Տրդատի գլխին եկած «փորձանքը» : Միւրեան (ըստ Հայոց Միհրան) թագաւորը գնում է որսի. յանկարծ կէսօր ժամանակ այնպիսի խիտ մառախուղ է տիրում, որ արեգակը բոլորովին խաւարում է : Սարսափը տիրում է որսորդներին. թագաւորի

² Մծխէթի այս հրեական գաղութը հաստատուել էր այնտեղ Քրիստոսից դարեր յառաջ եւ անընդհատ յարաբերութեան մէջ էր Պաղեստինի եւ Ասորիքի իր ազգակիցների հետ : Քրիստոսի ծնունդը գաղութն իմացել է հետեւեալ կերպով. «Մծխէթում լուր տարածուեց թէ պարսիկները տիրել են Երուսաղէմին, եւ ամբողջ հրեական գաղութը վատով համակուեց : Բարեխառար հետեւեալ տարին նոր լուր հասաւ թէ պարսիկներ չեն տիրել քաղաքին այլ մոգեր ընծայ են թերի մի նորածին մանուկի : Երեսուն տարի վերջը Աննա քահանայապետից պատգամաւոր եկաւ Մծխէթա, որ սասց հրեայ գաղութին՝ նա, որին մողերն ընծայ էին բերել, մեծացել է եւ ինքն իրեն Աստուծոյ Որդի յայտարարելով նոր կրօն է քարոզում, ուստի Քահանայապետը յորդորում է, որ Մովսիսականութեան հմուտ բոլոր հրեաները Երուսաղէմ հաւաքուին իրենց դասնութիւնը պաշտպանելու» :

հետևորդները թողնում փախչում են: Մի-
րիան երկարորէն իր աստուածներին օգնու-
թեան է կանչում. բայց ապարդիւն: Այս ժա-
մանակ նա յիշում է Նունէի քարոզած Քրիս-
տոսին եւ նրան է դիմում, ասելով ըստ
Ձուանչքի՝ «Յիսուս Քրիստոս, ընդունիր
զիս քեզ ի ծառայութիւն, հան ի դժոխոց
զանձն իմ, զի աստուածքն իմ չկարացին ինձ
օգնել. հաւատամ զի դու կարող ես եւ քո է
օր ու դիշեր»: Իսկոյն խաւարը փարատում
է, արեգակը նորից փայլում եւ Միրիան ողջ
առողջ տուն է դառնում:

Միրիան թէ զրազաշտական էր իբրեւ ի
ծնէ պարսիկ եւ թէ կոսապաշտ՝ իր հպատակ
վրացիներին հաճելի լինելու համար:

Թագաւորի դարձից յետոյ Նունէ այլ եւս
անարդել քարոզում է քրիստոնէութիւնը եւ
այդ նպատակով 10 տարի նա չըջել է ամբողջ
Վրաստանում կատարեալ անապատականի
նման: Խորենացին գեղեցիկ կերպով է պատ-
կերացնում նրա այս առաքելութիւնը: «Նրա-
նելին Նունէ ել գնաց աշակերտել զայլ եւս
գաւառան Վրաց՝ յանապակ լեզուէն, չըջե-
լով անպանդաքար եւ առանց աւելորդաց,
օտարացեալ յաշխարհէ եւ որ ի սմա. կամ թէ
ճշմարտագոյն ասել, ի խաչ ելեալ, ի կրթու-
թիւն մահու գեղեցիկ առնելով, բանիւ՝ վկայ
Բանին Աստուծոյ, եւ յօժարութեամբն իւրով
որպէս արեամբ պատկեալ: Չոր համարձա-
կիմք ասել Առաքելուհի եղեալ քարոզեաց ի
կարգաց սկսեալ առ դրամբք Ալանաց եւ
Կասրեց մինչեւ ի սահման Մասքթաց»:

Հին պատմագիրները սովորաբար աւան-
դում են թէ ինչպէս Հայաստանում, նոյնպէս
եւ Վրաստանում, բաւական էր, որ երկրի
թագաւորը քրիստոնէաց դառնար, մկրտուէր,
որպէս զի ամբողջ ժողովուրդը ստիպուէր
նրան հետեւել: Կան հատուկապէս տեղեկու-
թիւններ քուրմերի ընդդիմութեան մասին,
որոնց դէմ քարոզիչները, ինչպէս օրինակի
համար Գրիգոր Լուսաւորիչ, սաստիկ խիստ
միջոցներ են ձեռք առել, բայց բուն ժողո-
վարդի դիմադրութեան վերաբերեալ շատ
քիչ բան կայ ասուած: Եւ սակայն անկարելի
էր, որ դարերից ի վեր իր հաւատարմութեան
սովոր ժողովուրդի եւ նոր կրօնն ընդգրկող-
ների մէջ ընդհարումներ չպատահէին: Մեր
ազգային պատմիչներն, որոնք բոլորն էլ նոր
կրօնի հետեւողներ են եղած, աւելորդ են հա-
մարել այդ մասին որ եւ է անկողմնակալ եւ
հիմնաւոր տեղեկութիւն հաղորդել: Իսկ Վրաց

Տարեգրքում գտնում ենք այդպիսի հանրային
բնաւորութիւն կրող մի ընդգրկութեան նկա-
րագրութիւնը: Մի ամբողջ վրացական ցեղ,
Աքեուլի կոչուած, նրա հետ էլ Միրիանի
փեսան Պերոզ՝ չեն յօժարել նոր կրօնն ըն-
դունել եւ յամաօրէն շարունակել են կոսա-
պաշտութիւն գաւառնիլ: Միրիան կամեցել է
բռնութիւն դորձ դնել նրանց դէմ, բայց Նունէ
չի թողել. «Տէրն ոչ եկն սրով եւ աղեղամբ,
ասել է նա, այլ խաչիւ եւ աւետարանաւ» եւ
անձամբ գնացել է համոզելու Պերոզին: Այս
առաքելութիւնը Նինոյի համար տխուր հե-
տեանք է ունեցել. նա այնտեղ հիւանդացել
է: Այդ լսելով արքայական ընտանիքն եւ ու-
րիչ նորադարձներ անձամբ գալիս են նրա
մօտ, եւ «նստեալ շուրջ զնովաւ լային» դրում
է Ձուանչք: Ինչպէս երեւում է, մինչեւ
այդ ժամանակ նրանք չէին իմանում թէ իրենց
առաքելուհին ո՞վ էր եւ ո՞րտեղից էր եկել.
ուստի աղաչում են նրան, որ տեղեկութիւն
տայ իր մասին: «Ձի՞ կամիք տեղեկանալ յա-
զազս տառապեալ ազախնոյն Քրիստոսի, պա-
տասխանում է սրբուհին. պատմեալ է իմ
յականքս Սոդոմեայ, դատերդ արքային Հայոց,
համառօտ, զօրինակ դաւոյն իմ այսր. տուք
բերել քարտէս (թուղթ) եւ մեղան եւ գրեցէք
ի բերանոյ դորա»: Նինօ չէ ազատուած այս
հիւանդութիւնից եւ այնտեղ վախճանում է:
Վախուչթ նրա մահը դնում է 329ին, իսկ
Վրաստան մուտքը 316ին: Բրոսէ ուղղում է
այս թիւերն եւ աւելի հաւանական է գտնում
332 եւ 318: Տարբերութիւնը մեծ չէ: Այս
հաշուով Նինոյի քարոզութիւնը տեւել է
13—14 տարի:

Բրոսէ կասկածում է թէ Նինօ կամ ըստ
Հայոց Նունէ՝ յատուկ անուն լինի: Փօն Լէմ,
որ «Ս. Նինոյի վարքը» վրացերէնից գերմա-
ներէնի է թարգմանած, համոզուած է թէ
յատուկ անուն չէ, այլ պարզապէս տիտղոս,
իրր nomina եւ հաւանականաբար բուն անունը
Թէոդոսուս է, ինչպիսի անուն նոյն դարում
պատահում ենք իսպառական վկայաբանու-
թեան մէջ³:

Հաւանական է, որ այս Նունէ անունը
կապ ունենայ հեթանոսական չըջանի Նանէ
կամ Նանա կոչման հետ որ Հայոց մէջ էլ
պատահում է զրազաշտութեան դարում:
Նինա տիտղոս էր տրուած նաեւ «Ջրի աւ-
տուածուհուն»:

³ Analecta Bollandiana, 1901, t. XX, p. 338.

Ս. Նինոյի այս աւանդութիւնը շատ ան-
գամ քննութեան է ենթարկուել թէ վրացի եւ
թէ օտար պատմիչների եւ ուսումնականների
կողմից:

Վրացի պատմաբանների մօտ ընդհան-
րապէս այն կարծիքն է տիրում թէ քրիստո-
նէութիւնը Վրաստան է մտել երկու տարբեր
ճանապարհներով կամ երկու տարբեր տեղե-
րում է սկսուել: Նինօն համարում է հիւսի-
սային մասի, բուն Վրաստանի առաքելուհի
իսկ մեր Գրիգոր Լուսաւորիչը հարաւային
Վրաստանի այն է Մէսսիէթի կամ որ նոյն է
աշխարհադրականօրէն՝ Վիրահայֆի: Կախա-
բաձէի տեսութեան համաձայն Նինօ միայն
արեւելեան Վրաստանում է քարոզած, այս-
ինքն այն լեռնական ցեղի մէջ, ուր նա վախ-
ճանած է, ինչպէս տեսանք: Կան ի հարկէ
տարբեր կարծիք յայտնողներ եւս: Այսպէս՝
նորադոյն վրացի հեղինակներից մէկը, Պե-
րաձէ գրում է թէ մինչեւ Թ. դար եղած
հնագոյն վրացական ազբիւրնների համաձայն
Վրաստանում, ընդհանրապէս, քարոզողն
եղած է Հայոց Գրիգոր Լուսաւորիչը: «Այն
պարագան, շարունակում է նա, որ հայերն էլ
յիշում են Ս. Նինոյին, ապացոյց է թէ սա-
պատմական անձնաւորութիւն է, որի անունը
հայուքեան միջոցով վրացիներին է փոխան-
ցուած: Գ. դարում Մէսսիէթում (Վիրա-
ցայք) հայ եւ վրացի խառն բնակչութիւն
կար: Կարող էր պատահել, որ Նինօ այս վրա-
ցական նահանգում է քարոզել. եւ յետոյ երբ
բուն Վրաստանից վրացի գաղթականներ եկան
տեղաւորուեցան Մէսսիէթում, սրանք այնտեղ
պատրաստ դրան Նինոյի վերաբերեալ աւան-
դութիւնը: Որովհետեւ այս նահանգը իր քա-
ղաքական եւ մշակութային ազդեցութիւնը
տարածեց ամբողջ Վրաստանի վրայ, հետե-
ւաբար Նինոյի քարոզութեան պատմութիւնն
էլ տարածուելով հասաւ մինչեւ Վրաս-
տանի մայրաքաղաքները՝ Մծխէթ եւ ապա
Տիբիս⁴: Այս կարծիքն իր գորեղ հիմն ունի
նրանում, որ ինչպէս պատմեցինք, Նունէ նախ
Վիրահայք է եկած Կղարջի ճանապարհով,
ուր հովիւների հետ հայերէն է խօսել:

Փրանսացի հայագէտ Ա. Կարիէր, որ
այնքան հմտութեամբ քննել է Մ. Խորենացու
Պատմութեան ազբիւրնները, Նինոյի մասին
գրում է. «Խորենացու Պատմութեան Բ. Գրքի

⁴ Die Probleme der ältesten Kirchengeschichte Georgiens. Von Gregor Peradse. Oriens Christianus. Leipzig 1932.

ՏԵՐԳ Գլուխն ամբողջապէս նուիրուած է
Ս. Նունէի եւ Վրաց դարձի պատմութեան:
Խորենացու շատ ուրիշ պատմաձեւերի հակա-
ռակ, նրա այս մասին գրածը գտնուած է ու-
րիշ պատմագիրների մօտ...⁵: Դեռ քննելի է
թէ այն յաւելումներն, որ այժմ տեսնում ենք
Խորենացու մէջ, արդեօք իր սեպհական
գրածնե՞րն են թէ յետոյ ներմուծուած, իբրեւ
տեղական աւանդութիւններ: Կասկած չկայ,
որ եթէ այս յաւելումները դուրս հանենք,
Վրաց դարձի վերաբերեալ այս Գլուխը կա-
տարելապէս համաձայն է այն պատմութեան
որ Բակուր (վրացի արքան) հաղորդել է եւ
որը գտնում ենք Ռուֆինի եւ Սոկրատի մօտ⁶:

Վրաց Տարեգրքի համաձայն, իբր թէ
Միրիան թագաւորն եւ Նինօ Մեծն Կոնստան-
դիանոսին եւ նրա մօրը Հեղինէին են դիմել,
որ Վրաստան յոյն եկեղեցականներ ուղարկեն
ժողովուրդը մկրտելու եւ քրիստոնէութիւնը
տարածելու: Նորադարձ կայսրն էլ իբր թէ
չափազանց ուրախացած մի եպիսկոպոս, Չ
քահանայ եւ Յ սարկաւազ է ուղարկել, որոնք
իրենց հետ բերել են նաեւ խաչեր ու պատ-
կերներ...:

Վախուչթ, որ շատ կէտերում արդէն ուղ-
ղել է Վրաց Տարեգրքի առասպելական պատ-
մուածքները, այս պարագայում էլ հերքում է
Մեծն Կոնստանդիանոսի միջամտութիւնն եւ
Գ. դարում յոյն եկեղեցականների Վրաստան
գալը:

Խորենացին՝ բոլորովին լուռ է այդ մա-
սին. ընդհակառակը նա էլ ամէն ինչ վերա-
դրում է Գր. Լուսաւորիչին: Նա պատմում է
թէ երբ Նունէ տեսել է թէ Վրաց թագաւորն
ու թագուհին պատրաստ են քրիստոնէու-
թիւնն ընդունելու եւ տարածելու իրենց եր-
կրում, Գրիգոր Լուսաւորիչին է դիմում եւ
հարցնում՝ «Ղի՞նչ հրամայեցէ նմա դորձել
այնուհետեւ, քանզի յօժարութեամբ ընկալան
Վիրք գարողութիւն Աւետարանին»: Եւ Լու-
սաւորիչ պատասխանում է «հրամայելով»,
որ նախ կուռքերը կործանէ, ինչպէս ինքն է
արել Հայաստանում եւ «կանգնէ զպատուա-
կան նշան խաչին» մինչեւ որ Տէրը հովիւ ու-
ղարկէ նորադարձներին առաջնորդելու: Նու-

⁵ Խորենացու այդ Գլխի մէջ ասուած է. «Յողազս
Նունէի երանելոյ, եթէ որպէս եղև պատճառ փրկու-
թեան Վրաց: Կին ոմն անուն Նունէ, յրեկերայ սրբոց
Հովիտիմեանցն ի ցրուելոցն, փախստութեամբ հասեալ
յաշխարհն Վրաց, ի Մծխէթայ» եւ այլն:

⁶ A. Carrière, Nouvelles Sources de Moïse de
Khorène. Հանդէս Ամսօրեայ, 1893, էջ 178 եւ 183:

նէն այս հրամանին անստիճանով անմիջապէս կործանում է «զամպրոպային պատկերն Արամազդայ»⁷ :

Գր. Խալաթեանց ճշգրտով այս երկու տարբեր պատմութեան յայտարարում է Մեծն Կոնստանդինոսի դիմումելու եւ յոյն եկեղեցականները զալու մասին. «Այս ամբողջն առասպել է անկասկած, յետնագոյն դարերում յերկրում, Վրաց եկեղեցու կապը Յունաստանի հետ մինչեւ Գ. դար յառաջնելու նպատակով» : Եւ ապա՝ Խորենացու պատմածի մասին ակնարկում է. «Բայց Խորենացին էլ գրել է անհերեւ նպատակաւոր կողմնակալութեամբ յօգուտ Հայ եկեղեցու նախաւորութեան եւ զերակշռութեան»⁸ :

Խորենացին մի խոշոր թիւրիմացութիւն է թոյլատրել, վերագրելով Նունէին այն ինչ որ անտարակոյս Գր. Լուսաւորչի գործն է եղած : Այսպէս. «Զոր (գնունէ) համարձակմբ ասել առաքելուհի եղեալ, քարոզեաց ի Կարթլաց սկսեալ առ դրամբք Ալանաց եւ Կասրից, մինչեւ ի սահմանս Մասքթաց, որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս» : Իսկ Ագաթանգեղոս՝ ճիշդ դրա հակառակն, այս միեւնոյնը ասում է ոչ թէ Նունէի այլ Գր. Լուսաւորչի մասին, որ «ընդ ամենայն երկիրն Հայոց՝ ի ծագաց մինչեւ ի ծագս տարածանէր զմշակութիւն քարոզութեանն ակտարանութեան, ի Սասաղացոց քաղաքէն մինչեւ առ Կարթլօք, մինչեւ ի սպառ սահմանս Մասքթաց, մինչեւ ի գրունս Ալանաց, մինչեւ ի սահմանս Կասրից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն Հայոց» (էջ 485—486) : Ոչ մի անհաւանակութիւն չկայ Ագաթանգեղոսի այս պատմածի մէջ, քանի որ բոլոր այդ յիշուած վայրերը, Գ. դարում, «Հայոց երկիր» էին այսինքն Հայաստանի գերեզմանութեան ներքեւ էին գտնուում : Բայց պէտք է ընդունել բառացի, իբր թէ ամէն տեղ Գր. Լուսաւորչի ինքն է գործել :

Վրաց հին գրականութիւնն եւ նոյն իսկ հին եկեղեցական օրհներգները պահպանել են կապը յիշատակութիւններ Գր. Լուսաւորչի նկատմամբ : Ժ. դարի մի վրացերէն ձեռագրում, ինչպէս գրում է Մառ, Ս. Գրիգոր կոչուած է «հայկական երկիրն անուշահոտութեամբ լցնող» : մի ուրիշ օրհներգում, որ

ուղղուած է Գրիգոր Լուսաւորչին, ասում է. «Դու Քրիստոսի եկեղեցին անդրդուելի ժայռի վրայ հաստատեցիր»⁹ :

Ագաթանգեղոսի արարքերէն վերծանութեան մէջ, որի մասին ընդարձակօրէն պիտի խօսուի իր տեղում, ասում է. «Եւ սուրբն Գրիգոր կործանեաց զամենայն մեհեանս զայսոսիկ իսկ արքայն Տրդատ հրամայեաց պաշտօնէից մեհեանաց դառնալ ի քրիստոնէական հաւատս : Եւ վասն անօթոց պաշտամանց հրամայեաց զմասն բաշխել աղքատաց, իսկ զմասն մի առնուլ ի գանձ արքունի : Այսպէս արարին յերկրին Լագաց, Վրաց եւ Ալանաց... : Եւ Ս. Գրիգոր... սկսաւ սրբել զեկեղեցիս եւ կարգել ի նոսա քահանայս յայնոցիկ, որք զիտէին զսուրբ գիրս : Զոմանս առաքեաց ի Վրաստան, զոմանս յերկիրն արխագաց եւ արանաց...» :

«Եւ Գրիգորս այս սուրբ, կացեալ կաթողիկոս ողջոյն Հայաստանի, պատրաստեաց եպիսկոպոսունս եւ առաքեաց ընդ ամենայն երկիրն Հայոց, ի Վրաստան եւ յԱլանս : Եւ Հառ. զմի ի Վրաց անտի, որ եկեալ էր ընդ նմա ի Սեբաստիոյ՝ Իբիրք-դ-խուա, արար մեարօպոլիտ եւ յղեաց զի կարգեսցէ նա եպիսկոպոսունս ի վերայ ամենայն Վրաստանի : Էր նա վարուք զովելի, բարեպաշտ եւ զխոտն եկեղեցական գրոց...»¹⁰ :

Պատմութեանս գրողը հաւատացնում է թէ նա այս մասին լսել է «ի հաւատարիմ արանց» :

Այս բոլորն անշուշտ հեռու է հաւաստի պատմական իրողութիւն լինելուց, բայց աներկրայօրէն ցոյց է տալիս թէ մեծ էր աւանդութիւնն այն մասին թէ Ս. Գրիգոր է եղած Վրաստանում քրիստոնէութիւն ներմուծողը :

Գրիգոր Լուսաւորչի՝ Վրաց դարձի մէջ գործօն մասնակցութիւն ունենալը ակնարկուած է նաեւ Փաւստոսի քով, իբր նա պատմում է թէ Լուսաւորչի թոռը Գրիգորիս (Վրթանէսի որդին) 15 տարեկան հասակում եպիսկոպոս է կարգուել Աղուանից եւ Վրաց. «Երէց որդին (Վրթանէսի) Գրիգորիս Եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց, վասն հոգեկիր առաքինի արդասեացն, բարեհասակ եւ զգիտութիւնն Աստուծոյ յանձին կրելով : Ոչ ամուսնացաւ նա, այլ ի

⁹ Н. Марръ, Крещение Армянъ, Грузинъ, Абхазов и Алановъ. С. Петербургъ 1905.
¹⁰ Յաւելուած Արարատի, 1911. Թրգմ. Յուսիկ արքեպ. :

⁷ Այս արձանը գրում էր Կուր դեռի ամի վրայ, այնպիսի դիրքով, որ դիմացի կղերքից առաւօտները երկրպագում էին նրան. իսկ զո՞՞ մասուցանելու համար անցնում էին միւս եզերքը :
⁸ Հանդէս Ամսօրեայ, 1897, էջ 358 :

հնգետասանամենից Եհաս յաստիճան եպիսկոպոսութեան : Երթեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի հօրն գործոց նմանեալ» (Փաւստոս, Գ., Ե—գ) :

«Որչափ ալ զրուցախառն ըլլայ, զրում է իրաւամբ Հ. Ն. Ա. կիսեան, ժողովրդոցս (հայ, վրացի, աղուան) դարձի պատմութիւնն, այն չի կրնար ուրացուել թէ Գ. դարու առաջին տասնեակին, քրիստոնէական լուծին տակ կը գտնուէին արդէն այս երեք աշխարհները, միջնորդութեամբ գլխաւորաբար Հայոց Լուսաւորչին : Այս է բնիկ ժողովրդոց համագումն եւ զայս կ'աւանդեն զբաւոր յիշատակարանք : Լուսաւորչի այս զերը կապեց զրացի ժողովրդոց սրտերը Հայ եկեղեցոյն հետ հոգեւոր միութեամբ եւ տուաւ Հայոց Եկեղեցոյն տեսակ մը գերիշխանութիւն հաւատայ իրաց մէջ եւ եկեղեցոյ աւանդութեան նկատմամբ, Վրաց եւ Աղուանից վրայ»¹¹ :

Օտար պատմիչներից՝ Վրացիների քրիստոնէութեան յարելու մասին առաջին գրողն եղած է Ռուֆինոս (Rufin), իբրեւ Յաւելուած Եւսեբիոսի եկեղեցական Պատմութեան իր լատիներէն թարգմանութեան : Ռուֆինոս կենդանի աղբիւր է ունեցել յանձին Բակուրի. որի պատմածը նա հարազատօրէն արձանագրել է : Այս վրացի իշխանը՝ Թէոդոս կայսեր բանակում բարձր պաշտօն ունէր : Նա Պայեատինի սահմանակալ զօրքի հրամանատարն էր երբ Ռուֆինոս պատահել է նրան Երուսաղէմում :

Ռուֆինոս Բակուրին նկարագրում է «բարեպաշտ անձ եւ ճշմարտութեան բարեկամ» : Ռուֆինոսի այս տեսակցութիւնը, հետեւաբար Վրաստանի մասին գրածն, եղել է Գ. դարի վերջում : Թէ Սոկրատ պատմագրի եւ թէ Խորենացու պատմածները վերջ ի վերջոյ յանդում են Ռուֆինոսի այս գրածին, մի քանի տարբերութիւններով, օր. հ. Սոկրատ Նինոյին գերուհի է համարում, իսկ Խորենացին Ս. Հովհաննէի ընկերուհիներից մէկը :

Բակուր՝ Պաղեստինից դարձել է Վրաստան եւ այնտեղ թագաւորել, ըստ Ռուֆինոսի, որի հետ համաձայն է նաեւ Կորին, որ յիշում է նրան իբրեւ Վրաց արքայ (էջ 15), որով Բակուրի պատմական անձնաւորութիւն լինելը անտարակոյս է : Ուրիշ պատմիչներ, ինչպէս Մարկ. Ամմիանոս եւ Զոսիմոս նոյն-

պէս յիշում են Բակուրին : Զոսիմոս նրան գովում է իբրեւ «հարամտութիւնից ազատ» մարդ, բայց նրան հայ է համարում :

Արեւելագէտ Բուլլանդեան P. Peeters, որ քաջ հմուտ է վրացերէնին եւ Վրաստանի պատմութեան, այսպէս է բացատրում քրիստոնէութեան մուտքը Վրաստանում : Սեւ ծովի եզերքի քաղաքներում, Կ. Պոլսի հիմնարկութիւնից էլ յառաջ յունական զաղութներ են եղել, որոնց մէջ քրիստոնէութիւնը վաղուց մուտք է գտել, որովհետեւ այնտեղի Պիտրոնոս (= Պիժունդա) քաղաքի եպիսկոպոսը ներկայ էր Նիկիոյ ժողովին (325) : Այս յունական զաղութների ազդեցութիւնը տարածում էր սահմանակից Վրաստանի ներսերը, շնորհիւ այն ընդարձակ առեւտրական յարաբերութիւններին, որ վաղուց գոյութիւն են ունեցել նրանց մէջ : Այսպէս՝ Պլինիոս պատմում է, որ հելլենական զաղութներից մէկի, Dioscuriasի հրապարակում այնչափ մեծ թուով եւ այլեւայլ ազգերին պատկանող յաճախորդներ էին գտնուում որ հոռոմայեցիք, որոնց գերիշխանութեան տակ էր այս տեղը, ստիպուած էին 120 թարգման գործածել նրանց հետ բանակցելու համար :

Այս թարգմաններն անշուշտ կովկասցի էին, հայ կամ վրացի, եւ արդէն փոքր ի շատէ քրիստոնէացի (plus ou mal baptisés գրում է Հ. Peeters) : Ահա այս ծովեզերքից, այն է Կողքիսի կամ այժմեան Ախիսաղիայի ճանապարհով է, որ հաւանականաբար առաջին անգամ քրիստոնէութիւնը ներմուծուած է Վրաստան եւ տարածուած դէպի լեռնագաւառ Սվանէթը : Սեւ ծովի հարաւային կողմում բնակուած էր մի ուրիշ վրացական ցեղ, լազիքը, որոնք նոյնպէս այն միջոցին, այն է Գ. դարում, քրիստոնէութեան են յարել եւ ապա այնքան մեծ ջերմեռանդութիւն ցոյց տուել, որ իրենց սեպհական վանքն են հիմնել Երուսաղէմի անապատում : Այս լազական վանքը Զ. դարում արդէն հնացած է եղել, որովհետեւ նորոգուել է Յուստինիանոս կայսեր միջոցներով : Պրոկոպիոս Կեսարացին (Զ. դարում), որ մանրամասն նկարագրում է լազերի բնակավայրը, Լազիկան, հաստատում է, որ լազերը Արեւելքի ամենաջերմեռանդ քրիստոնեաներն էին : Պրոկոպիոս ի մէջ այլոց յիշում է ոչ միայն այստեղի, այսինքն Արեւմտեան Վրաստանի թագաւորներին, այլ նաեւ Արեւելեան Վրաստանի, եւ այնպիսի անուններ է տալիս որոնք անձանօթ են Վրաց

¹¹ Կիւրիոն, Վիեննա 1910, էջ 83 :

Ժամանակագրութեան: Պրոկոպիոս վատանկի պատմագիրը է Յուստինեանի ժամանակ քրիստոնէութեան պատմութեան¹²:

Դ. եւ Ե. դարերում, քրիստոնէութիւնը դեռ հեռու էր վրաստանում ժողովրդի կրօնը լինելուց: Ե. դարում պարսից ազդեցութիւնը խոր արմատ էր գցել այնտեղ: Վրաց արքունիքը եւ մասամբ ազնուական դասակարգը յարած էին քրիստոնէութեան եւ քաջալերում էին նրա տարածումը, բայց ժողովուրդի մեծամասնութիւնը դեռ եւս անտարբեր էր խաչի դաւանութեան եւ չէր թողել զրազաշտական կրօնը: Այսպիսի հանգամանքներում Վրաց արքան, յատկապէս Արշիլ Ա. (428—438) պարսիկ մարզպանի հետ դաշն էր կապել, ըստ Վրաց Տարեգրքի, որի համաձայն թէ մոզապաշտութիւնն եւ թէ քրիստոնէութիւնը միանգամայն թոյլատրուում էին երկրում: Այս հիման վրայ պարսկադաւաններն իրենց թաղն ունէին նոյն իսկ մայրաքաղաքում, Մծխէթում, իրենց մոզերովը եւ մոզպետովը¹³:

Ըստ ամենայն հաւանականութեան քրիստոնէութիւնը ընդհանրացած է վրաստանում միայն Զ. դարում, այն Յովհաննէս եպիսկոպոսի եւ ընկերների ձեռքով, որոնց գործունէութիւնը, թէեւ տարբեր ժամանակամիջոցում եւ զրուցախառն, բայց յարատեւ պահպանուել է ազդային աւանդութեամբ: Այս Յովհաննէս եպիսկոպոսն եկել է Միջագետքից (°) ըստ Զուանչրի, եւ եղել է «առաքելական ձիրքերով զարդարուած»: Նա որոշած է եղել ճգնաւոր դառնալ եւ անապատ է քաշուել, երբ հրեշտակից աստուածային պատուէր է ստանում վրաստան երթալ եւ քրիստոնէութիւնը տարածել: Յովհաննէս հպատակում է եւ 12 աշակերտներով գալիս է վրաստան: Վրաց թագաւորն եւ կաթողիկոսը մեծ ուրախութեամբ են ընդունում նրան: Յովհաննէսի ատալին գործն է լինում Զաղէն լեռը մաքրել դեւերից: Այնտեղ, ինչպէս պատմում է Ք. Յ. կուռքերի պաշտամունք կայ եղել դեռ, «ուր բնակէին դեւք բազումք եւ դազանք»: Յովհաննէս ազօթքի ոյժով հաւածում է դեւերին, իսկ դազաններին իրեն բնակարանում: Այս հրաշքի պատճառով էլ նրա անունը յիշուում է «Զաղէնցի Յովհաննէս»:

Ուն էպիսկոպոս: Այս էական գործը կատարելուց յետոյ նա ուղարկում է իր աշակերտներին երկրի զանազան կողմերը քրիստոնէութիւնը քարոզելու եւ ամբասնելու, իսկ ինքը մնում է Զաղէն լեռան վրայ եւ այնտեղ էլ վարձանուում: Հետաքրքրական է Զուանչրի մի յիշատակութիւնն այս առթիւ: «Եւ գրեցան իրքն եւ եզան յեկեղեցիս Քարթլայ» ասում է նա: Զուանչրի՝ այս «գրեցան իրքն» խօսքերով ի նկատի ունի Հայոց Յայսմաւուրբն, որ ընդունուած եւ գործածութեան մէջ էր Վրաց եկեղեցիներում:

Վրացի պատմագէտները մանրամասն քննութեան են ենթարկել այս Զաղէնցի Յովհաննէս եպիսկոպոսի եւ իր ընկերների ազգայնութեան կամ ծագման հարցը: Քրիստոնէայ գրականութեան մէջ նրանք յիշուում են իրրեւ «13 սիրիացի քարոզիչներ»: Բայց իրօք սիրիացի՞ էին նրանք: — Ոչ, ասում է վրացի գիտնական Դ. Զուրինիչվիլի. եւ նրա պատճառարանութիւնը անհիմն է: Նրանք սերում էին հաւանականաբար այն վրացիներից, որոնք գաղթել են Կապպադոկիա, ուր վաղուց տարածուած էր քրիստոնէութիւնը: Նրանց սերունդին պատկանող այս եկեղեցականներն էին, որ կրօնական եռանդից մղուած վերադարձել են իրենց նախահայրերի հայրենիքն, այնտեղ քրիստոնէութիւնը տարածելու կամ հաստատելու նպատակով:

Կապպադոկիան ըստ ինքեան օտար տեղ չէր ոչ վրաստանի եւ ոչ Հայաստանի համար: Դեռեւս Գ. դարում եւ այնուհետեւ էլ շարունակ, պարսից եւ բիւզանդացոց պատերազմների ժամանակ, բազմաթիւ հայեր եւ վրացիներ, գլխաւորաբար ազնուական զարմից, պարսիկներից նեղուելով ապաստանել են Կապպադոկիա, բիւզանդական կայսրութեան մէջ:

Վրաց եկեղեցին մի հին աւանդութիւն եւս ունի, խորապէս արմատացած, որի մասին նոյնպէս արժէ խօսիլ: Այս աւանդութիւնը վերաբերում է Քրիստոսի անկար պատմուածանին, որ, ըստ այս գրոյցի, բերուած է եղել Մծխէթա (Տփլիսի մօտ) Երուսաղէմից վախած հրեաների ձեռքով եւ այնուհետեւ մնացել է այնտեղ:

Վրացիք այնքան խոր կերպով համոզուած էին այս աւանդութեան ճշգրտութեան, որ երբ Ը. դարում Բագրատունիք, վրաստանի գահի վրայ բազմեցան, Քրիստոսի պատմուածանը մտաւ նրանց արքայական զինանշանի մէջ,

որ այսպէս էր կազմուած. յատակը փռուած էր այս պատմուածանը, որի երկու թեւերի վրայ խուցուրի (եկեղեցական) տառերով արձանագրութիւնը ասում էր թէ դա՛ Քրիստոսի անկար պատմուածանն է: Այսպէս էլ մնում է այնուհետեւ: Սակայն Առաքել պատմագիրը գրում է թէ երբ Ծահարաս պարսից թագաւորը Ժէ. դարի սկիզբը Հայաստանի հետ միասին վրաստանն էլ աւերելով բիւրաւոր վրացիներ գերել ու տեղափոխել է վրաստանից, բազմաթիւ ուրիշ անօթների հետ այս Անկար պատմուածանն էլ տարել է իր հետ Պարսկաստան: Այնուհետեւ ուսուական ազբիւրների համաձայն, շահը կամենալով ուսուական ցարին մի հաճելի ընծայ ուղարկել, 1625ին, Ռուսամբէկ անուեով մի վրացի պատգամաւորի միջոցով, նրան գոհարազարդ մի ոսկեայ արկղիկ է ուղարկել, որի մէջ կայ եղել այս պատմուածանը, որն եւ յանձնուել է ուսու պատրիարք Ֆիլարէտին: Երբ այս լսում է Վրաց թագաւորի Մոսկուայի ներկայացուցիչը, ոմն Թէոդոս արքեպիսկոպոս, նա յայտնել է թէ դա կեղծ է եւ թէ բուն պատմուածանը գտնուում է Մծխէթում: Պատրիարքն եւ իր մերձակորներն սկսել են կասկածիլ եւ զիմել են Կ. Պոլիս եւ Երուսաղէմ, ճիշդ տեղեկութիւն ստանալու համար թէ ո՞ւր է Անկար պատմուածանը եւ պատասխան են ստանում թէ պատմուածանն, որչափ իրենց յայտնի է, չէ տեղափոխուած վրաստանից: Այնուամենայնիւ Մոսկուայի եկեղեցական շրջանները հաւատ չեն ընծայում դրան եւ պնդում են թէ իրենց ստացածը Քրիստոսի հարազատ պատմուածանն է, որ այժմ 3 մասի բաժնուելով գրուած է եւ պահուում է մի մասը Ուսպէնսկի մայր եկեղեցում, միւսը Ալեքսանդրոսէպոսկու մենաստանում եւ երրորդը Պետրոպոլիսի տաճարում: Այս երեքն էլ զըսուում են Պետրոզրազում¹⁴:

Այս ամբողջ աւանդութիւնը զուրկ է պատմական հիմքից:

Եւրոպական աղբիւրները չեն ընդունում այս վրացական աւանդութիւնն եւ անկար պատմուածանը դնում են Գաղղիայում, ուր մինչեւ հիմայ էլ գտնուում է:

¹⁴ Н. Марръ, Хитонъ Господень в книжникахъ легендахъ Армянъ, Грузинъ и Сирійцевъ (ն. Մառքրիստոսի պատմուածանը Հայոց, Վրաց եւ Ասորաց մասնական գրոյցներում):

Ի՞նչ էր իսկապէս Քրիստոսի հազածը եւ ի՞նչ եղաւ: Պատմութիւնից յայտնի է, որ այն դարում հրէական զգեստը, ուրեմն Յիսուսի հազածն էլ, 4 կտորից էր բաղկացած: Նախ շապիկ մարմնի վրայ եւ գօտի, որը սեղմում էր այդ շապիկը. վերեւից էլ վերաքլալ եւ դարձեալ գօտի, ուրեմն 4 կտոր: Բացի դրանցից անշուշտ կային նաեւ որ եւ է գլխանոց եւ կօշիկներ: Ի՞նչ եղան այս առարկաները: Մատթէոս Աւետարանիչ պատմում է թէ Քրիստոսի մահից վերջը զինուորները «բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ» (ԻԵ): Այնպէս է ենթադրուում թէ Մարիամ Աստուածածինն եւ առաքեալները գրածով գնած կը լինին բոլորը հոռոյցիցի զինուորները: Յամենայն դէպս նրանց մասին Պատմութիւնը մեզ պահել է հետեւեալ տեղեկութիւնները: Բիւզանդիայի Հեղինէ կայսրուհին փնտռել է տալիս Քրիստոսի շարձարանքի վերաբերեալ առարկաներն եւ 326ին գտնում է Ս. Պաշն ու բերում Կ. Պոլիս: Քիչ յետոյ կայսրուհին իր որդու Կոստանդիանոսի հետ ճանապարհորդում է Եւրոպայում, գալիս է Գաղղիա, ուր երկար ժամանակ ապրել է Տրեվ (Trèves) քաղաքում, որ այս պատճառով Երկրորդ Հոռոմ է կոչուել: Կայսրուհին իր հետն է ունեցել Քրիստոսի վերարկուն սրն իրրեւ յիշատակ իր բնակութեան թողել է այնտեղ: Սա է, ասում են, բուն «անկար պատմուածանը»: Զ. դարում այս պատմուածանը, կամ գուցէ մի ուրիշը, երեւան է գալիս Գալաթիայում (Կ. Պոլսում), ինչպէս ժամանակակից պատմիչները գրում են: Իրէն, կամ Իրենէ, Բիւզանդիայի այս դաժան կայսրուհին, որ իր որդի Կոստանդին Պորփիրոզէնի աչքերն է փորել տուել որպէս զի նրա տեղ ինքն իշխէ, մտադրում է ամուսնանալ Կարոլոս Մեծի (Charlemagne) հետ, որպէս զի Արեւելքի եւ Արեւմուտքի երկու մեծ կայսրութիւնները միացնէ եւ այս նպատակով նրան ընծայ է ուղարկել Գալաթիայում պահուած պատմուածանը: Մեծն Կարոլոս յօժարութեամբ ընդունում է կայսրուհու այս նուէրը, բայց ոչ նրա ձեռքը...: Նա մեծ հանդիսով Անկար պատմուածանը, 800ին, Պոստոս 12ին ուղարկում է Արժանտէյլ (Argenteuil), կուսանաց վանքն, որի արքայութի մայրապետն իր սեպհական աղջիկն էր: Այդտեղ էլ մնացել է պատմուածանը այնուհետեւ եւ տարին մի անգամ ցոյց է տրուել ուխտաւորներին:

¹² Les débuts du Christianisme en Géorgie, par P. Peeters. Bulletin de la Classe des Lettres et des Sciences Morale et Politique de l'Académie Royale de Belgique, T. XVIII, No. 1—2. Bruxelles 1932.
¹³ Վրացիներում այս հայերէն ձեւն է գործածուած՝ մոզպետ:

